

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 35/4

8 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Գեթսեման» ՍՊԸ 11.08.2015 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ 14.07.2015 թ-ի թիվ 6103845 ակտի դեմ:

«Գեթսեման» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Թիվ 6103845 ակտը ստորագրած տեսուչներից երեքը սույն թվականի 23 ին, ժամը 17:30-ին մտել են ընկերությանը պատկանող խանութ, որը գտնվում է Երևան-Սևան-Իջևան մայրուղու 65.3 կմ վրա, պահանջել են ՀԴՄ-ն և դուրս են բերել «Z» հաշվետվություն (հերթ. համար 0124, ժամը 17:37) 0 դրամ գումարով: Որից հետո տպելով 800 դրամ կտրոն, դուրս են բերել «Z» հաշվետվություն (հերթ. համար 0125) 800 դրամ գումարով: Իրենց հետ չի եղել հայտարարություն տված Մերի Թումանյանը:

Մերի Թումանյանի հայտարարության մեջ նշվում է, որ 14:20-ին խանութից գնում է կատարել, իսկ հաշվետվությունը (հերթ. համար 0123) դուրս է բերվել ժամը 17:09-ին 35600 դրամ ընդհանուր գումարով: Ժամը 17:09-ից - 17:37-ը խանութում առևտուր չի եղել, որի արդյունքում ժամը 17:37-ին դուրս բերված հաշվետվությունը (հերթ. համար 0124) եղել է գրոյական:

Ենթադրյալ խախտումը տեսուչների պնդմամբ արձանագրվել է 2015թ. հունիսի 23-ին ժամը 17:30-ին, իսկ այս դեպքում խախտվել է 10 օրյա ժամկետը:

Ընկերության նկատմամբ կազմվել է նաև թիվ 6108215 ակտը, որով լրացուցիչ պարտավորություններ են առաջադրվել արտոնագրային վճարի գծով: Սակայն հաշվի առնելով, որ Օրենքը մասնակի էր խախտվել նշված ակտը կարող էր նաև չգրվել:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է չեղյալ համարել ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ 14.07.2015 թ-ի թիվ 6103845 ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ պետի 09.06.2015 թ-ի թիվ 6103845 հանձնարարագրի համաձայն «Գեթսեման» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ 14.07.2015 թ-ի թիվ 6103845 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ քաղաքացի Մերի Թումանյանի կողմից 23.06.2015 թ-ին ժամը 17:35-ին Սևան-Դիլիջան մայրուղու 65.3 կմ հասցեում գտնվող ընկերությանը պատկանող հանրային սննդի կետից կատարվել է գնում 800 դրամի չափով՝ 2 հատ «Գյումրի» տեսակի գարեջուր, որի դիմաց կանխիկ

վճարված գումարը վաճառողուհի Գոհար Մարգարյանը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Ստուգումն իրականացնող անձինք ներկայացրել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև, ժամը 17:37-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում հասույթը կազմել է 0 դրամ: Չմուտքագրված գումարը ժամը 17:38-ին մուտքագրվել է ՀԴՄ և նորից դուրս է բերվել Z հաշվետվություն 800 դրամ գումարով:

Ստուգմամբ պարզվել է, որ խախտվել են ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշման 17-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, որի համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Ակտում նշված խախտումն արձանագրելու համար հիմք է հանդիսացել քաղաքացի Մերի Թումանյանի 23.06.2015 թ-ի գրավոր հայտարարությունը: Մասնավորապես, հայտարարությունում Մերի Թումանյանը նշել է, որ 23.06.2015 թ-ին «Գեթսեման» ՍՊԸ-ին պատկանող մթերային խանութից ժամը 14:20-ի սահմաններում իր կողմից գնվել է 2 հատ «Գյումրի» տեսակի գարեջուր 800 դրամ արժեքով, սակայն կատարված գնման դիմաց վաճառողուհու կողմից ՀԴՄ կտրոն չի տրամադրվել:

Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում Մերի Թումանյանի 23.06.2015 թ-ի գրավոր հայտարարությունը չի կարող հիմք հանդիսանալ Ակտով արձանագրված խախտումն ապացուցված համարելու համար: Այսպես, ըստ Մերի Թումանյանի հայտարարության, «Գեթսեման» ՍՊԸ-ին պատկանող մթերային խանութից 2 հատ «Գյումրի» տեսակի գարեջրի գնումը կատարվել է ժամը 14:20-ի սահմաններում, սակայն Ակտում նշված է, որ այդ գնումը կատարվել է ժամը 17:35 ին, այսինքն՝ մոտ 3 ժամ հետո: Հանձնաժողովի համոզմամբ նշված փաստը կասկածի տակ է դնում Ակտով արձանագրված խախտումն ընկերության կողմից իրականում կատարված լինելու հանգամանքը:

Տվյալ դեպքում հիմնազուրկ են նաև ստուգման ընթացքում Ակտով արձանագրված խախտումն ապացուցելու համար ձեռք բերված ապացույցները (ՀԴՄ-ից դուրս բերված Z հաշվետվություններ), քանի որ ինչպես նշվեց, Մերի Թումանյանի հայտարարությունում և Ակտում մատնանշված գնումները տարբեր ժամերին կատարված լինելու հետևանքով չեն կարող նույնականացվել:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

...

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում»:

Քննարկվող դեպքում ընկերության համար առկա են ոչ բարենպաստ փաստական հանգամանքներ, հետևապես ստուգման ակտի 1-ին կետով արձանագրված խախտման ապացուցման պարտականությունը կրում է ստուգող մարմինը՝ ի դեմս ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց:

Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում Ակտը կազմվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ

հողվածի 1-ին մասի «բ» կետի պահանջների խախտմամբ, այն է՝ սույն գործում առկա ապացույցները չեն հիմնավորում ընկերության կողմից Ակտի 1-ին կետով արձանագրված խախտումը կատարված լինելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթներով, որի համաձայն անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, Հանձնաժողովը եզրակացնում է, որ ընկերության գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ 14.07.2015 թ-ի թիվ 6103845 ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ